

հասկացողութեան համար, որ հեղինակը ի նկատի է ունեցել։ Հաս բառերով կարելի է փոխարինել այս ոճը—օր։ Հազուադիւ, սակաւաթիւ և այլն։

Բայց գիտնական գրքերի թարգմանչի կողմից մեծ պակասութիւնը լեզուի տաղակալիութիւնն է։ Հայերէն առհասարակչնեն կարդում, իսկ կարդացող դասակարգն էլ կարող է հասկանալ միմիայն լեզուն և ոչ երկար պերիոդներով զբաժ գրքեր։ Տեսէք թէ ինչ ծանր լեզուով է թարգմանած այս հրաշալի գիրը։

Այս և մի ուրիշ օրինակ։

Ենթադրում են, որ այդ հողմերը ունեն բազմազան լայնութիւն և բարձրութիւն, պատուելու և ամեն կողմ շարժուելու տարրեր արագութիւն, ինչպէս գաղերի մասնիկները ունեն։—որ այդ հողմերի թիւը աշազին, գրեթէ անսահման մեծ է, —ուր նրանը պիտի խմբուեն զանազան միաւորութիւնների նայելով իրանց մեծութեանն ու շարժման նմանութեանը, և որ այսպիսով առաջ պիտի բերեն տարրեր, իսկ այս տարրերի փոխարար ներգործութիւնը պիտի արտայայտուի քիմիական միաւորութիւնների զանազան եղանակներով, որից պիտի առաջանան մասնկական նիւթի բոլոր ձեերը։

Խորհուրդ կտայինք պ. Նիսիցեանին իւր գովելի աշխատասիրութիւնը տպարդիւն չգարձնելու համար ուշադրութիւն գարձնել լեզուի վերայ և գիտնական գրքեր թարգմանելու ժամանակ ձեռքի տակ ունենալ Միթթարեանների նոյնանման նիւթի վերաբերեալ գրքերը։

Յանաստեղծ իդէալիստ Շիլէր. պատկերազարդ. գրեց Դոկ. Փիլ. Ս. Թառալեանց։

Անգեալ տարուայ թուով Ս. Պետերբուրգ հրատարակուած է պ. Ս. Թառայեանցի մի չքնաղ և մեծադիր պատկերազարդ հատոր գերմանական նշանաւոր բանաստեղծ Փրից Շիլէլի գլուխ գլխարապէս կեանքի և մասամբ գրականական գործունէութեան մասին։ Ոչ մեր նկատողութեան ծաւալը և ոչ մեր ձեռքի տակ եղած միջոցները թոյլ չեն տալիս մեզ երկար կանգ առնելու այս նշանաւոր գրքի բովանդակութիւնը պատմելու, ուստի կրաւականանաց մի քանի խօսքով բացատրելու այս գրքի նշանակութիւնը։ Հեղինակը բոլորովին իրաւացի կերպով նկատում է յառաջաբանի մէջ, որ մեր գրակա-

նութիւնը աղքատ է երսպահան հանձարների մասին գրած գրքերով։ Հեղինակը կամեցել է իւր ուժերի չափով ծառայել մեր գրականութեան, աւալով յայտնի՝ իդէալիստ հեղինակի մանրամասն կենսազրութիւնը։ Խւ այս ցանկութիւնը կատարել է Պ. Թառայեանդը մեծ աշխատասիրութեամբ և ամենայն երախտագիտութեան արժանի տոկունութեամբ։ Այս տեսակ գրքերի ընդհանուր նշանակութիւնը նրանումն է, որ բարձր և վեհ զգացմունքների և առողջ գաղափարների տէր հանձարների գրուածքները դաստիարակող և կրթող նշանակութիւն ունին։ Շիլէրի նշանաւոր երգերի և թատերական գրուածներից Պ. Թառայեանը բազմաթիւ երեսներ թարգմանել է ոտանաւորով և բառականին սահուն ոճով։ Սէրը, աղատութիւնը, յոյսը, աշխատանքը և արուեստը և գեղեցիկը—աչա Շիլէրի աննման երգերի բովանդակութիւնը։

Աշխատանքի բարերար աղդեզութիւնը մարդու վրայ և նրա մեծ նշանակութիւնը հետեւեալ տողերով է արտայայտում բանաստեղծը։

Եւ դու բազմարդիւն աշխատանք ազնիւ,
Առաջ ես մղում իմ կեանքի անիւ,
Անընդհատ գործում, շարունակ ստեղծում,
Միշտ կառուցանում, երրէը չես եղծում.
Տիեզերական մեծ շէնքսի համար՝
Աւազ ես կրում անթիւ անհամար,
Բարեկամիս հետ ձեռք-ձեռքի բանաձ,
Դու ես թարմաղնում իմ հոգին յոգնած։

Շիլէրի աղատութեան մէրը բանաստեղծական բարձր թարբերով երեան է գալիս նրա նշանաւոր և Ակէլչէլմ Ցէլ գրամայի մէջ։ Մի քանի կտորներ այս գրամայից Պ. Թառայեանի թարգմանութեամբ բերուած են գրքի մէջ և կարդացվում են շատ մէծ հաճոյքով։ Աչա Ցէլի մենախօսութիւններից, մի հատուած։

Ով կամենում է աշխարհըում ապրել,
Պիտի կարենայ կռուել, մաքառել,
Բնութիւնն ինձնից հովիւ չէ ստեղծել...
Իմ կոչումն է միայն զէնքով հալածել...
Միայն նա ունի կեանքի իրաւունք,
Ով որ շարունակ նրան ձեռք է բերում
Ով թարմ հայեացրով իւր շուրջն է դիտում,
Սեփական ոյժին և Աստծուն դիմում։

Նա դուրս է գալիս ամեն վտանգից,
Եւ չե զարհուրում ոչ մի փորձոնքից:

Աչա մի ուրիշ կտոր այս դրամայից, ուր հովիւները եւ-
րենց հայրենիքը ազատ տեսնելու իրաւունք են երգում:

Այդ երկիրը մնք ինքներս ենք ստեղծել,
Սեփական ձեռքով տոկուն ջանքերով...
Մէզը ցրել ենք մայլ դաշտերից,
Եւ արեգակին ճանապարհ բացել,
Աշարկու ժայռը ջարդել ու փշել,
Անգունդների վրայ ուղիներ շինել:
Մեր հազարամեայ անհուն աշխատանք
Օտարն է ուղում այժմ ժառանգել,
Եւ մեր սեփական սուրբ հոգի վրայ
Մեր ձեռն ու ոտը շղթայով կապել...
Բայց ոչ բանութիւնն էլ սահման ունի:

Դիրքը աւելի կենսագրական տեղեկութիւններ ու-
նի քան գրականական, Շիլերեան հարուստ զրականութիւնից
ոչ նշանաւոր զիանականների և քննադատների գրուածներից
հատուածներ և ոչ գէթ նրանց կարծիքներ չկան դրբի մէջ.
Պ. Թառայեանը առհասարակ կամեցել է ընթերցանութեան
գիրք կազմել և ոչ թէ գիտնական տրակտատ գրել. Սակայն
այսպիսի ահագին աշխատութիւնը լոյս հանել առանց աղբիւր-
ները յիշատակելու, գրականական տրադիցիայի հակառակ վար-
մունք է. Գոնէ աղբիւներից գիտաւորները պէտք էր լիշտա-
կել: Ճիշտ է, Պ. Թառայեանը ասում է, որ ինքը ստրկա-
բար չէ օգտուել աղբիւներից, բայց այս արդէն քննդատի գոր-
ծը կինէր ասելու, եթէ Պ. Թառայեանը հաւատարիմ մնար-
գրականութեան մէջ ընդունուած սովորութեան և ցոյց տար-
իւր աղբիւները. Խրկորդ տարօրինակ պակասութիւնը այս
գրքի կայանում է նրանում, որ այս հրաշալի թղթի վրայ և
սիրուն պատկերներով հրատարակած գիրքը բովանդակութեան
զանկ չունի, որ շատ գժուարացնում է կարևոր գլուխները և
տեղերը երկրորդ անգամ կարդալու կամ մի որսէ կտոր ստու-
գելու ժամանակ. Սակայն այս գիրքը թէ վսեմ բովանդակու-
թեան կողմից և թէ բոլորովին մաքուր գրական լեզուի կող-
մից արժանի է ուշադրութեան և զանկալի, որ շատ տարածուի-
Բայց մի՛թէ այս մեր զանկութիւնը կարող է իրագործուել-
Եթէ մեր հարուստները հազարաւոր օրինակներ գրքեր առնեն

և տարածեն ժողովրդի մէջ, ապա ի՞նչ փողեր կմնայ նրանց
որդիներին թղթախաղի և անառակութեան համար:

ԳԱՐ. ԵՆԳԻՐԱՐԵԱՆ.

**Յովհաննէս Դուրբախեան. Ժանօթ պատկերներ. Ա. Պե-
տերբուրգ 1903 թ. գինը 75 կոպ.**

Այս գրքի հեղինակը մեր գրականութեան պատահական
հիւրերից է. բայց չի կարելի ասել, որ նա բոլորովին օտար
մինէր այդ ասպարիզի վերայ: Նա ունի մեր պարբերական
հրատարակութիւններում մի քանի յօդուածներ, բանասիրա-
կաններ և թարգմանութիւններ: Ըստ երևոյթին Յ. Դուրբա-
խեանը գերադասում է Փէլիէտոնական ժանրը և ընդունակ է
հումորով զրելու: Բայց որովհետև հումորով գըելը դժուարին
արուեստ է, իսկ Դուրբախեանը փոքրիկ տաղանդի տէր գրող
է—ուստի և նրա հումորը դժուարամարս է, արեսատական:
Հումորիստն էլ երգիծաբան է, այսինքն իրան նպատակ է դը-
նում ծաղրի միջոցով ուղղել մարդուն, բայց նա չպէտք է ապ-
ակէ, չպէտք է բարկացկոտ և կծու լինի: Նա պէտք է ծաղրէ
բարեացակամարար (եթէ կարելի է այդպէս ասել), նա աւելի
սրախօս է լինելու քան հեծնող: Ռուս վիպասան Շիդրինը կամ Ռ.
Պատկանեանը իր մի շաբք բանաստեղծութեանց մէջ—բուն երգի-
ծաբան է՝ հեգնող ու մտրակող. Գոգոլը, Պարոնեանը, Քասիմը, Ռ.
Պատկանեանը իր նախիջևանի բարբառով գրած պատկերների
մէջ—հումորիստ են: Շրջանակը որոշել անկարելի է, բայց հեօ-
դինակը ինքը պէտք է զիտենայ չափը: Բայց Ա. Դուրբախեա-
նը այդ չափը չգիտէ. մի բանասիրականում նա կարծես ապ-
ակող է, միւսում—սրախօս պատմիչ: «Մանօթ պատկերնե-
րումն» էլ նոյնպէս՝ չես իմանում, թէ հեղինակը լուրջ է խօ-
սում, թէ ծաղրում է: Այդ է պատճառը, որ զիբքն էլ տարօ-
րինակ տպաւորութիւն է թողնում՝ մի քանի զլուխներ շատ
լաւ են գրուած, մի քանի տիպեր (ինչպէս՝ Տէր Խաչատուրը,
Քաղալը և այլն) լաւ են դուրս բերուած և կենդանի գծած,
տեղ տեղ շատ սուր դիտողութիւններ են երևում և ճըշ-
գրիտ, իրական պատկերներ են նկարագրուած—բայց ընդհա-
նուր առմամբ ամբողջութիւն չի ներկայացնում շարադրութիւնը:
Գրքի անունը «Մանօթ պատկերներ» է և դա համապատասխա-